ՔՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ

Ամարէ Կընդրը

(Մարտական)

Քարուան պատրաստուեց որ Ամիդ [1]) գնար,
Բայց իսկապէս, նա Բըշէրիկ[2]) կ'երթար.
Դեր-Կոլայ դաշտից քարուան անցկացաւ,
Սև-քարի աղբիւրի մօտը թափուեցաւ։
Ֆլիթէ Կոթօն [3]) ելաւ այնտեղից,
Ամարէ Կընդրին կանչեց հեռուից.
«Տուր, ասաց, բաժըս [4]), յետոյ անցկացիր,
Ռաշկոլցոց փէշքէշն մտիցդ հանեցի՞ր...»
Ամարէ Կընդրը պատասխան տուեց.—
«Ֆլիթէ Կոթօ՝ բաժդ աչքիս վրայ,
Ա՛ռ, առջին ջորին և կամ վերջին եզ—
Ո՞վ բաժ չի տուած կ'ուզէ հեռանայ։»
Ֆլիթէ Կոթօն՝ եզ, ջորի չուզեց.
«Ամարէ Կընդրը՛, ասաց, պէտք չէ ինձ,
Ո՛չ առջին ջորին, ո՛չ էլ վերջին եզ.—
Ուսիդ շաշխանան [5]) դու պիտի տաս ինձ։»
—«Լաւ, Կոթօ, կանչեց Ամարէ Կընդրը,

---

[1]) Դիարբեկիր քաղաք, [2]) Մի աւան Դիարբեկիրից հիւսիսարևելք։

[3]) Այս երգը 30—40 տարուայ հնութիւն ունի. Ֆլիթէ Կոթօն՝ ռաշկոլցի քրդական ցեղին է պատկանում. այս ցեղը բնակում է՝ ամառը՝ Գիւղել Դէրէում, ձմեռը՝ Բշերիկում։ Սրանք հարամիներ—գողեր են։ Միմիայն քրիստոնեաները և առանձնապէս հայերը չեն որ քուրդ հարամիներին են ենթակայ. դաշտաբնակ խաղաղ քրդերն էլ, իրանց ցեղակիցներից հարստահարւում են, մանաւանդ առաջներում։ Որոշ ժամանակից ի վեր՝ համեմատապէս անցեալի հետ՝ այժմ քուրդը քրդի մալը շատ չի յափշտակում, քուրդը քրդի արիւնը շատ չի թափում, այլ... քրդի մէջ՝ որոշ չափով իրանց հակազդեցութիւնն են ունեցել՝ նրա քրիստոնեայ հին դրացի ազգի վերաբերմամբ բռնկցրած նոր խորհրդ զգացումներ...

[4]) Քուրդ յուղկահարներն՝ առհասարակ՝ նախ ճանապարհորդներից բռնի կերպով նուէր են ուզում, եթէ իրանց պահանջը կատարուի՝ որ ինչ խօսք լաճախ մեծ է լինում՝ բաց են թողնում, իսկ եթէ դիմադրութիւն ցոյց տրուի, այն ժամանակ կողոպուտի կամ սպանման է դիմում։ Բռնի պահանջուած այս տեսակ նուէրը բաժ է անուանւում։

[5]) Վեց անկիւնի փող ունեցող հրացան, որը՝ փամփուշտաւոր հրացանների մուտ գործելուց առաջ շատ թանդ էր գնահատւում։

Հեռու կաց ինձնից, ես խաղաղ մարդ եմ,
Ես մուսուլման եմ, խօ չեղայ քաֆիրը, [6])
Ուզածդ բաժ՝ բաժ չէ, թող ինձ, խնդրում եմ.
Ճիշտ երեք օր է մեր տանեցիներ
Ինձ են սպասում, ճամբէս աչք բռնել։»
Կոթօն ձայն տուեց Ամարէ Կընդրին.
«Իմ աչքն ընկել է քո շաշխանային...»
Ամարէ Կընդրն ասաց զայրագին.
«Ֆլիթէ Կոթօ, ուսիս շաշխանան՝
Իմ արնագինն է կամ քո արնագին,
Կամ թէ պառաւ մարդ—Շամլէի՝ կալան [7])։
Կոթօն էլի ասաց Ամարէ Կընդրին՝
«Քո շաշխանայից սիրտը չի կտրի...։»
Ամարէ Կընդրը բեռ գետին բերաւ,
Իր առջև դրեց և դիրքը մտաւ.
Ուսից ցած բերեց շաշխանան՝ կանչեց,
«Նաալաթ լինի քեզ, էն եօթ ջոջ պապիդ...
Ապա թէ մէկ էլ այդ թփի տակից,
Անփորձ դուրս եկար, փրկեցիր հոգիդ՝
Աւետիս տանեն թող քո Շամլէ մօր.
Մի տղայ ծնուեց, ասեն, նրան նոր։»
Ամարէ Կընդրը մոռցաւ իր Աստուած,
Եւ սկսեց թունդ շաշխանան գցել.
Ֆլիթէ Կոթօն յոյսից զրկուած՝
Ասաց՝ «չի լուսանում գիշեր վրաս էլ.»
Ճչաց՝ «ռաշկոլցիք, հասէք, գժուեցի
Էս շան տղայի հրացանի ձայնից...։»
Կոթօյի ձայնից վեր կացան եկան՝
Տեսան Կոթօյին վէրք առած կրծքից։
Ամարէ Կընդրը կանչեց անխռով՝
(Միաժամանակ հրացան լցնելով՝)
«Առաջ ընկնողներ, լսէք, մի եկէք,
Ես քարվանչի եմ, ես խօ քաֆիրը չեմ,
Մըսըլմանութիւն չէ էդ որ կանէք,
Էս էլ իմացէք՝ ես գեադայ էլ չեմ։

Թարգմ. Ս. Ցով.

---

[6]) Հայհոյող, հերետիկոս. այս ածականը բոլոր ոչ-մուսուլմաններին են տալիս։

[7]) Փեսայից աղջկայ հօր տրուելիք պատատիր՝ նուէրը՝ կալան է կոչւում։